

ԻՆՖՈՐՄԱՅԻԱ ИНФОРМАЦИЯ

«ՍԱՍՆԱ ԾՈՒՐ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ

«Սասնա ծուր» ժողովրդական վեպի հայտնարերման և հրատարակության 100-ամյակի կապակցությամբ, 1971 թ. հուլիսին, ՀՍՍՀ ԳԼԽ հնագիտության և ազգագրության ինստիտուտը՝ վեպի նոր պատումներ հայտնաբերելու նպատակով, կազմակերպեց հատուկ արշավախումբ՝, որը զործեց 1971 թ. հուլիս-օգոստոս և 1972 թ. հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին:

Վիպահավաքման փորձը, վեպի տպագիր պատումներն ու գիտական ուսումնասիրությունը պարզել էին, որ «սասնա ծուրը» պահպանվել է հիմնականում արևմտահայության միջավայրում: Ուստի արշավախումբը հենց սկզբից որոշարկեց այցելել այն շրջանները, որոնք վերաբերակեցված են արևմտահայ նախնիներին զաղթականներով և զնալ վեպի նախորդ գրառողների հետքերով ու պարզել, թե արդյոք հին վիպասացների սերունդները շարունակում են պահպանել վեպը:

Հետազոտության ոլորտի մեջ ընդգրկվեցին Աշտարակի, Թալինի, էջմիածնի, Հոկտեմբերյանի, Անիի և Սպիտակի (առաջին տարի), Արտաշատի, Արարատի Մասիսի, Արուսյանի, Հրազդանի, Ապարանի (երկրորդ տարի) շրջանները: Թված շրջանների հայ ազգաբնակչության ազգադրական կազմը մատուցողական հետևյալ պատկերն է ներկայացնում. ա) տեղացիներ կամ բրնիկներ, բ) եկվորներ կամ վերաբնակիչներ, որոնք տարբեր ժամանակներում, սկսած 1820-ական թթ. մինչև 1920-ական թթ., զաղթի երեք հիմնական հոսանքով եկել են Արևմտյան Հայաստանից ու Պարսկահայրից և վերաբնակվել հիշյալ շրջաններում: Այս երկրորդ ազգադրական խմբում են ընդգրկվում սասունցի, մշեցի, խոթիցի, ալաշկերտցի, խնուսցի, մանաղկերտցի, խլաթիցի, վանեցի, սղմեցի, շատախցի, դավաշ-

ցի, մոկացի, սպարկերտցի, կարկառցի, բիթլիսցի, արձնշցի, աղելչեվազցի, բայազետցի, բասեցի, սլարսկահայ և այլ վերաբնակիչներ:

Շուրջ հինգ ամսվա ընթացքում արշավախումբն այցելեց 150 գյուղ ու բանավան: 50 բնակավայրից դրանցվեց «Սասնա ծուր» վեպի 64 նոր տարբերակ, տարբեր ծավալով ու կառուցվածքով, բանահյուսական տարբեր արժեքով: Պատումների բանակն ըստ դրանցման վայրերի հետևյալ պատկերն է ներկայացնում.

1971 թ.

1. Աշտարակի շրջան	9 պատում
2. Թալինի շրջան	17 »
3. Անիի շրջան	4 »
4. էջմիածնի շրջան	6 »
5. Հոկտեմբերյանի շրջան	4 »
6. Արարատի շրջան	1 »
7. Երևան	1 »
8. Բիթլիսի	1 »
Ընդամենը՝	43 պատում

1972 թ.

1. Աշտարակի շրջան	2 պատում
2. Արտաշատի շրջան	2 »
3. Արուսյանի շրջան	2 »
4. էջմիածնի շրջան	1 »
5. Մասիսի շրջան	3 »
6. Արարատի շրջան	7 »
7. Ապարանի շրջան	3 »
8. Հրազդանի շրջան	1 »
Ընդամենը՝	21 պատում

Պատումներն ըստ ծագման ազգադրական տեղավայրերի հետևյալ պատկերն են ներկայացնում.

1. Սասուն	— 21 պատում
2. Մուշ, Բուլանիս, Խուր	— 10 »
3. Ալաշկերտ	— 9 »
4. Մանաղկերտ	— 2 »
5. Խնուս	— 2 »
6. Բիթլիս	— 2 »
7. Բայազետ	— 5 »

Արշավախմբի մեջ առաջին տարին ընդգրկվեցին բանագետներ՝ Ս. Հարությունյանը (արշավախմբի ղեկավար), Ա. Սահակյանը, որոշ Զ. Խալափյանը, պարագետ Ժ. Խաչատրյանը, երկրորդ տարին՝ Ս. Հարությունյանը, Ա. Սահակյանը, Զ. Խալափյանը և մատենադարանի ավագ գիտաշխատող Զ. Ամալյանը:

8. Մոկս	—	6	պատում
9. Շատախ	—	3	»
10. Գավաշ	—	1	»
11. Սպարկերտ	—	2	»
12. Հայոց ձոր	—	1	»
13. Բաշկալա	—	1	»
14. Վան	—	1	»

Գրանցված պատումների 64 ասացողներից 56-ը տղամարդ են, 8-ը՝ կին։ Վիսասացները համախմբվում են տարիքային հետևյալ խմբերի մեջ.

60—69 տարեկան—	10	տղամարդ. 1	կին
70—79 » —	19	» 3	»
80—89 » —	18	» 3	»
90—99 » —	7	»	
100—109 » —	2	» 1	»

Այս թվերը խիստ հատկանշական են և խոսում։ Պարզվում է, որ վեպը պատմողներն ու պահպաններն են, ընդ որում, պատումների ճնշող մեծամասնությունը բաժին է ընկնում 70—100 տարեկան վիսասացներին։

Վիսասացներն ըստ զրադմուների և գրագիտության հատկանիշի հետևյալ պատկերն են ներկայացնում.

Հողագործ գյուղացի	—43,	որից գրագետ՝
Հողագործ արհեստավոր	— 6,	որից գրագետ՝
Բանվոր	— 4,	որից գրագետ՝
Պառայող	— 4,	որից գրագետ՝
Տնային տնտեսուհի	— 7,	որից գրագետ՝

Ընդամենը՝ 64, որից գրագետ՝ 11. Կիսագրագետ՝ 10, անգրագետ՝ 43

Այդպես ուրեմն, 1971—72 թթ. հավաքած վեպի պատումների տեղադրական-ազգագրական, վիսասացների սեռա-տարիքային ու այլ ուվյալները գալիս են վերստին ասպացուցելու այն ճշմարտությունը, որ

ա) «Սասնա ծռերը» պատմական հանգամանքների բերումով փեպետ պատմվում է Արևելյան, այսինքն՝ Սովետական Հայաստանի շրջաններում, սակայն ծագումով սերում է Արևմտյան Հայաստանից։ Գրանցված 64 պատումների ասացողներից 57-ը 1914—1916 թթ. Արևմտյան Հայաստանի վերահիշյալ շրջաններից տեղահանված և Արևելյան Հայաստանում բնակություն հաստատած արևմտահայ գաղթականության տարբեր սեռի ու տարիքի ներկայացուցիչներ են։ 7 ասացող ծնունդով պատկանում են Արևելյան Հայաստանին, սակայն նրանց նախնիները, որոնցից լսել և սովորել են վեպը, 1828—1829 կամ 1877—1878 թթ. գաղթել են դարձյալ Արևմտյան 15 Հաճղիս, № 3

Հայաստանից՝ Ալաշկերտից, Բուլանդիից և Բայազետից։

բ) Վեպը գիտեն արդեն ծերության տարիքն ապրող տղամարդիկ և կանայք, որոնք լսել և մտապահել են կամ դեռ «երկրում»՝ իրենց բուն հայրենիքում հղած ժամանակ (70-ից ավելի տարիք ունեցողները), կամ էլ այստեղ՝ հռչակված համադյուզացի վիսասացներից և իրենց մեծերից (մեծ մասամբ՝ 70-ից ցած տարիք ունեցողները)։

դ) Վեպը մտապահողները ճնշող մեծամասնությամբ անգրագետ, մասամբ և կիսագրագետ դյուզացիներ են, կամ գյուղացիական միջավայրից ելած սևագործ բանվորներ, արհեստավորներ, տնտեսուհիներ։

դ) Վեպն իմացողները մեծ մասամբ վարպետ վիսասացներ չեն. նրանցից 43-ը վեպը միայն լսել և մտապահել է, երբեք չի պատմել, մնացած 21-ը վեպը պատմել է առաջներում միայն, մոտ 30—40 տարի առաջ։ Թեպետ վերջիններին մեջ կան վարպետ վիսասացներ, բայց նրանք էլ չպատմելով՝ աստիճանաբար մոռացության են տալիս վեպը։

Նիկե Մանուկ Արևդյանը տակավին ընթացիկ դարի սկզբներին էր հավաստում վիսասացների պատահական պատմողներ լինելը և վեպի քայքայման, աստիճանաբար մոռացման փաստը.

3, Կիսագր.՝ 8, անգր.՝ 32
2, Կիսագր.՝ չիք, անգր.՝ 4
1, Կիսագր.՝ 1, անգր.՝ 2
3, Կիսագր.՝ 1, անգր.՝ չիք
2, Կիսագր.՝ չիք, անգր.՝ 5

ապա 70 տարի անց այդ իրողությունն ավելի է խորացել։ «Սասնա ծռերն» այժմ բնավ չի պատմվում. վեպի որոնումն ու հայտնաբերումը դարձել է ծանր հետախույզական աշխատանք։ Վեպն իմացողների մասին անտեղյակ են անգամ նրանց մերձավորներն ու հարազատները, քանզի այն այլևս կենդանի պատմվող բանահյուսական իրավութուն չէ։ Մեծ ջանքերի, որոնումների, հարցումների ու կենդանի զրույցների զբնով էր հաջողվում գտնել որևէ վիսասաց։

Նախորդող վիսասաց սերնդի մասին վկայություններն այն եզրերն են, որոնցով հնարավոր է դառնում վերականգնել վիսապահպանման ու վիսափոխանցման ավանդական կարգը։ Արշավախումբը նպատակադրվեց զնալ արդեն հայտնի վիսասանական սերունդների, «զպրոցների» ու կենտրոնների հետքերով։ Պարզվեց, որ դրանք ոչ թե հետքեր են, այլ մինչև այսօր գոյատևող և ժամանակի ու տարածության մեջ

չաղարտված ավանդ, վիպերու և պահպանելու վարպետ-աշակերտ փոխանցում, որը կրկին ու կրկին հաստատում է վիպասանական չվավերականացված «գայրոցների» գոյությունն Արևմտյան Հայաստանում: Եվ Լևոն Գարեգին Արվանձությանի առաջին և միակ վկայությունը իր գրառած պատմի ասացող Տարոնցի Կրպոյի՝ վիպասանական հատուկ «գայրոցի» աշակերտ լինելու մասին, մշտապես ունեցել է բանագիտական բացառիկ արժեք, ապա հետագա և հատկապես մերօրյա (Արվանձությանի գրառումից հիշտ 100 տարի հետո) նույնատիպ վկայությունները հաստատում, լրացնում, բացահայտում ու հարստացնում են այդ արժեքը:

Արշավախմբի գործունեության ընթացքում արդեն հայտնի վիպասանական «գայրոցները» թարմացան նոր ներկայացուցիչներով. բացահայտվեցին նոր կենտրոններ, վարպետ նոր վիպասացներ, որոնք հանրահայտ են եղել և՛ իրենց բուն հայրենիքում, և՛ Սովետական Հայաստանում՝ գաղթից հետո, իրենց հայրենակիցների շրջանում: Այստեղ, սոցիալական ու աշխարհագրական արդեն բոլորովին նոր պայմաններում նրանք ոչ միայն մնացել են հին ավանդների կրողներ, այլև շարունակել են վեպի փոխանցումը՝ թողնելով այն հաջորդող սերնդին որպես անմեռ ժառանգություն:

Թախինի շրջանում վերարձակված Սասնո տարբեր գյուղերից 1915 թ. գաղթած տարեց և միջին սերնդի վիպասացները գրեթե միարժեք են շնորհիվ երկու աղբյուր՝ Սասնո Ճախըրկան գյուղից Թամո Դավթյանին² և Սասնո Արծվիկ գյուղից Օհանին: Օհանից պատում չկա պահպանված, թեպետ ժամանակակիցները վկայում են, որ նրանից կատարվել է գրանցում 1920-ական թթ. սկզբներին. սլատում են, որ հավաքել են մի քանի վիպասացների և գրառման համար ընտրել միայն Օհանի պատումը: Ժամանակակիցների հիշողության մեջ Օհանի վեպ և հերթափ պատմելը դարձել է ասելիք: Թախինի շրջանի Ագարակ գյուղում իր հայրենակիցների հետ վերաբնակված սասունցի Օհանը շարունակել է ապրեցնել վեպը, որ նա պատմել է հատկապես որոշակի առիթներով (գյուղամիջյան կոնֆլիկտի, տմարդի արարքների դեպքում), նախատելով վատ արարքը և ցանկանալով ունեղնողիների մեջ տեսնել Դավթի արժանավոր սերունդներին. «Դուք մեռե՞ր իր, դուք Դավթի ցեղեն չի՞ր»: Օհանին լսողները հավաստում են, որ նա ավելի ամբողջական, ավանդական ու կատարյալ դիտեր վեպը, քան հանրահայտ Թամոն: Օհանն ու Թամոն հաճախ էին հյուր լինում մի-

մյանց և քաջատեղյակ էին մեկը-մյուսի վիպելու արվեստին: 1971 թ. գրանցվեց երեք պատում, որոնց ասացողները՝ նախկին սասունցիներ, դարձյալ Սասնո Արծվիկ գյուղից, վեպը սովորել էին Օհանից: Այդ երեք տարբեր պատումների համատեղումից կարելի է հիմա մոտավոր պատկերացում կազմել Օհանի պատմած տարբերակի որակի մասին: Սասնո Արծվիկ գյուղն իր վիպասաց Օհանով, նրան նախորդած ու հաջորդած ասացողներով, դառնում է վիպասացության մի նորահայտ օջախ:

Նման ավանդական ուրիշ օջախներ ևս հայտնաբերվեցին (Մուշ, Մանազկերտ, Մոկս, Շատախ), բացահայտվեցին վեպի անցման նոր ուղիներ, նոր կապեր վիպասանական տարբեր գոտիների միջև:

Ալաշկերտի հաստուր գյուղի վիպասացներից 1930-ական թթ. գրաված էր երկու պատում: Վիպասաց երեք սերնդի մասին վկայություններն արդեն ստեղծում էին որոշակի պատկերացում հաստուրի վիպասանական ավանդների մասին: 1971 թ. որոնումներն ամբողջացրին, մասամբ էլ ճշտեցին այդ պատկերացումները: Վիպասաց մի սերունդ էլ ավելացավ արդեն հայտնի և լավագույն ասացողների կողքին: Ամենալավ վկայությունը տանում է դեպի Դըրմեն՝ մի արտասովոր վիպասաց ու հերթափասաց: Դըմենից վեպն անցել է Ռես Գսպոյին ու Քոչե Վարդանին. այս երկուսից սովորել են Մանուկ Թորոյանն ու Կարապետ Թամոյանը, որի հոր պապն է եղել Դըմեն: հաստուրցի Սեդրակ Աբաջյանը (այժմ 84 տարեկան, 1915 թ. գաղթել է հաստուրից և հաստատվել Սիրակում) տվեց մեկ այլ, ոչ պակաս հայտնի վիպասացի՝ Փրո Արրեի անունը, որը նախորդում է Մանուկ Թորոյանի և Կարապետ Թամոյանի սերնդին: Այս Փրո Արրեից էլ սովորել է վեպը Սեդրակ Աբաջյանը, նրան է իրավամբ իր վարպետը համարում, շնայած շատ լավ ճանաչել և լսել է նաև Մանուկին ու Կարապետին: Սեդրակ Աբաջյանը մեր օրերի եղակի վիպասացներից է, իր վարպետի արժանավոր ժառանգորդը, այժմ ինքն արդեն վարպետացած, բայց այլևս առանց աշակերտ-հետևորդի: Դրանովն էլ մի պատում Փրո Արրեի որդուց՝ Սմբատ Դևորգյանից (82 տարեկան, ապրում է Հոկտեմբերյանի շրջանում): Վերջինս իրեն վիպասաց չի համարում, բայց բավական մանրամասն ու ավանդական հիշում էր հոր պատմածը: Մանուկ Թորոյանի, Կարա-

² Սասնա ծոեր, հատ. Բ, Ա մաս, Երևան, 1914, էջ 159—197:

³ Նույն տեղում, Մանուկ Թորոյանի պատումը, էջ 247—353 և Կարապետ Թամոյանի պատումը, էջ 355—404. գրառող՝ Կ. Մելիք-Օհանջանյան:

պետ Թամոյանի, Սեդրակ Արաքյանի և Սմբատ Դեորգյանի պատումների համադրությունը, գրությանը գրեթե տողացի նույնությունը, կայուն ավանդականությունը, խիստ վիպական կառուցվածքն ու պատմեցողական իրավունք են տալիս խաստուրին հատկացնելու վիպասանական միտումն ու ինքնատիպ «դպրոցի» պատիվը։ Սեդրակ Արաքյանն ու Սմբատ Դեորգյանն այդ «դպրոցի» վերջին վիպասացներն են։ «Արաքյան Սեթուն» լայնեց նաև խաստուրցի մեկ այլ վիպասացի անուն՝ Հակոբ Իննոյանի, որը դարձյալ 1915 թ. գաղթել եկել է Արևելյան Հայաստան, ապրել Անիի շրջանի նախկին Ղուբի գյուղում և մահացել 1940-ական թթ.։

Հայտնարկվեցին դեռևս անցյալ դարի 90-ական թթ. հայտնի ասացողների վիպարվեստի անմիջական ժառանգորդներ. մոկացի Նախ Բեռուզ⁴ վեպն անցել է Տիգրան Մուրադյանին (նույն Մոկսի Իննեկանց գյուղից, այժմ 86 տարեկան, ապրում է էջմիածնում), մոկացի Վարդան Մուխսի-Բաղիկյանից⁵ Մանուկ Խաչատրյանին (նույն Մոկսի Դաշտ թաղից, Վարդանի եղբորորդին, այժմ 76 տարեկան, ապրում է Աշտարակում), մոկացի Մանուկ Հարությունյանից⁶ Հակոբ Ավագյանին (նույն Մոկսի Դաշտ թաղից, 69 տարեկան, ապրում է Աշտարակում), ալաշկերտցի Բարսեղ Սահակյանից⁷ Երվանդ Հունանյանին (նախնիները նույնպես ալաշկերտցի, 74 տարեկան, ապրում է Ապարանում)։

Ապարանի երկու գյուղերը՝ Ափնա և Ղաղնաֆար, ուր վեպի գրառումներ է կատարել Գարեգին Հովսեփյանը 1890-ական թթ., տվեցին նոր վիպասացներ, իբրև ասացույց նույն տեղում վեպի վերջին մեկդարյա ավանդույթի պահպանման ու փոխանցման իրողություն։

Վիպասանական ավանդների փոխանցման մեջ արդեն բանիցս հաստատված օրինաչափություն է այն, որ լավագույն վիպասացների առաջին ժառանգորդները լինում են նրանց որդիները։ Մեր ասացողների մեծ մասին ուղղած բոլոր հարցումները տանում էին դեպի մոտավոր ազգականները՝ հայրն է արտակարգ լավ իմացել վեպը, հորեղբայրը, քեռին, եղբայրը, պա-

պը, տատը։ Այստեղ արդեն ժառանգաբար անցնում է ոչ միայն վեպը, այլև ասացողի ստեղծագործական ունակություն ու ինքնությունն Ենթադրող տաղանդը։

Բոլոր վկայությունները, անգամ թուցիկ, բացասում են վեպի պատահական անցման բընույթը. չկա մի ասացող, որ շիմանա, թե ումից է սովորել, ո՞վ և ինչպիսին էր իր նախորդ վիպասաց սերունդը, կամ ո՞ր ավանդների կրողն է ինքը։ Վկայություններն իրենց հիմքում մի կայուն օրինաչափություն ունեն՝ հնամյա ավանդ։ Խիստ կայուն է նաև ասացողների վերաբերմունքն այդ ավանդի նկատմամբ. նախորդ վիպասաց սերունդն ավելի լավ գիտեր, ավելի վարպետ էր, քան ներկան։ Սա վարպետի ներկատմամբ ունեցած յուրօրինակ հարգանքի տուրք լինելուց բացի, և ամենից առաջ, խոսում է վեպի նախկին վիճակի մասին, որը ժամանակի ընթացքում անխուսափելիորեն ենթակա է որոշ փոփոխությունների։

Վիպասացների որոշակի հատկանիշներով ու վեպի հիշած պատմական ճակատագրով է պայմանավորված գրանցված պատումների որակը։

Նախ տեսնենք ճյուղերի քանակական հատկանիշներն ըստ նոր պատումների։ Դրանք, ըստ ճյուղերի քանակի, ամբողջականության և ազգագրական շրջանների հետևյալ պատկերն են ներկայացնում (տե՛ս աղյուսակը)։

Ինչպես հայտնի է, «Սասնա ծռեր» վեպն ունի չորս ճյուղ. 1. Սանասար-Բաղդասար, 2. Մեծ Մհեր, 3. Դավիթ, 4. Փոքր Մհեր։ Դրանցից յուրաքանչյուրն ինքնին առանձին վեպ է հերոսների յուրաքանչյուր սերնդի մասին. ճյուղերը միմյանց հարակցվում են ըստ հոր և որդու հաջորդականության։ Սա վեպի դասական այն կառուցվածքն է, որ վկայված է մեկ հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ պատումներով և ասացուցված՝ գիտական հետազոտություններով։ Հայտնի է միաժամանակ, որ ոչ բոլոր պատումներն ունեն պահպանած վեպի բոլոր չորս ճյուղերը, այն էլ միանման ամբողջականությամբ։ Ընդհակառակն, պատումներից շատերում վեպի ճյուղերի քանակը տատանվում է 1—4-ի միջև՝ ճյուղերի տարրեր ամբողջականությամբ։ Այս ընդհանուր օրինաչափությունից, բնականաբար, դուրս չէին կարող մնալ մեր արշավախմբի գրանցած պատումները։

Աղյուսակից պարզվում է, որ 64 պատումներից 27-ն ունեն վեպի բոլոր չորս ճյուղերը, 11-ը՝ ամբողջականությամբ, 16-ը՝ այս կամ այն ճյուղի թերիությամբ։ 14 պատում բաղկացած է երեք ճյուղից, ճյուղերի տարրեր հարակցությամբ, ամբողջականությամբ և թերիությամբ։

⁴ «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, էջ 3—54. գրառող՝ Մ. Աբեղյան։

⁵ «Սասնա ծռեր», հատ. Ա, էջ 473—600, գրառողներ՝ Հարություն Գիլանյան և Սենեքերիմ Տեր-Հակոբյան (կատարված է երկու գրառում)։

⁶ Նույն տեղում, էջ 603—648. գրառող՝ Մ. Մելիք-Օհանջանյան։

⁷ «Սասնա ծռեր», հատ. Բ, Բ մաս, Երևան, 1951, էջ 483—531. գրառող՝ Ե. Հալալյան։

№	Վ ե պ ի ճ յ ու դ ե ր ր				Մ ո զ	Շ ա տ ա թ	Գ ա լ ա շ	Հ ա յ ո ղ ձ ո ղ	Ս պ ա թ ի թ ր	Մ ու շ	Ս ա ս ու շ	Ա լ ա շ Կ ե ր	Մ ա շ ա գ Կ Կ ր	Խ շ ու շ	Թ յ թ ի թ	Բ ա յ ա Կ ե ր	Վ ա շ	Բ ա շ Կ ա լ ա	Ը ղ ա Կ ա լ ա թ			
	I	II	III	IV																		
1	Ս ա ն . Բ ա դ .	—	Մ հ ե ր	—	Դ ա Վ ի թ	—	Մ հ ե ր			2	2	3		1					11			
2	Ս ա ն . Բ ա դ .	—	Մ հ ե ր	—	Դ ա Վ ի թ	—	[Մ հ ե ր]			1	1		1	1				1	7			
3	Ս ա ն . Բ ա դ .	—	[Մ հ ե ր]	—	Դ ա Վ ի թ	—	Մ հ ե ր				1								1			
4	Ս ա ս . Բ ա դ .	—	[Մ հ ե ր]	—	Դ ա Վ ի թ	—	[Մ հ ե ր]	1			1				1				3			
5	[Ս ա ն . Բ ա դ .]	—	[Մ հ ե ր]	—	Դ ա Վ ի թ	—	Մ հ ե ր			1									1			
6	[Ս ա ն . Բ ա դ .]	—	Մ հ ե ր	—	Դ ա Վ ի թ	—	[Մ հ ե ր]			1									1			
7	[Ս ա ն . Բ ա դ .]	—	[Մ հ ե ր]	—	Դ ա Վ ի թ	—	[Մ հ ե ր]				1								1			
8	[Ս ա ն . Բ ա դ .]	—	[Մ հ ե ր]	—	[Դ ա Վ ի թ]	—	[Մ հ ե ր]					1				1			2			
9	Ս ա ն . Բ ա դ .	—	Մ հ ե ր	—	Դ ա Վ ի թ			1			1	1							1			
10	[Ս ա ն . Բ ա դ .]	—	[Մ հ ե ր]	—	Դ ա Վ ի թ									1			1		4			
11	[Ս ա ն . Բ ա դ .]				Դ ա Վ ի թ	—	Մ հ ե ր			1									1			
12			Մ հ ե ր	—	Դ ա Վ ի թ	—	Մ հ ե ր					1							1			
13			[Մ հ ե ր]	—	Դ ա Վ ի թ	—	Մ հ ե ր					1							1			
14			Մ հ ե ր	—	Դ ա Վ ի թ	—	[Մ հ ե ր]		1			1							1			
15			[Մ հ ե ր]	—	[Դ ա Վ ի թ]	—	[Մ հ ե ր]				1				1				3			
16	Ս ա ն . Բ ա դ .	—	[Մ հ ե ր]	—	Դ ա Վ ի թ						2								2			
17	Ս ա ն . Բ ա դ .	—			Դ ա Վ ի թ					1	1	1							1			
18	[Ս ա ն . Բ ա դ .]	—			Դ ա Վ ի թ			1								1			3			
19			Մ հ ե ր	—	Դ ա Վ ի թ							1							1			
20			[Մ հ ե ր]	—	Դ ա Վ ի թ					2			1		1				1			
21					Դ ա Վ ի թ	—	[Մ հ ե ր]				1	1							6			
22					Դ ա Վ ի թ					2		7							1			
23					[Դ ա Վ ի թ]					1		1							9			
								6	3	1	1	2	10	21	9	2	2	2	3	1	1	64

12 պատում բաղկացած է երկու ճյուղից, դարձյալ ճյուղերի տարբեր հարակցությամբ, ամբողջականությամբ է թերիության մեջ վերջապես, 11 պատում բաղկացած է սոսկ մեկ՝ Դավթի ճյուղից, միայն երկու պատումի թերիությամբ: Ինքնուրույն աշխատանքները ամփոփելիս ստացվում է հետևյալ տոկոսային հարաբերակցությունը.

Հորս ճյուղ ունեն պատումների	42,2 %
Երեք ճյուղ ունեն	21,8 %
Երկու	18,7 %
Մեկ	17,3 %

Ստացվում է, որ պատումների մեծամասնությունը բաղկացած է չորս և երեք ճյուղից. երկու և մեկ ճյուղ ունեցող պատումները կազմում են դրանցված նյութի 1/3-ը միայն:

Առաջիկ ուղղությամբ է, սակայն, ճյուղերի հաճախականությունը պատումների մեջ: Այսպես,

Սանասար-Բաղդասարի ճյուղն առկա է	38	պատումներում,	30	ամբողջ.,	8	թերի
Մեծ Մհերի	47	»	28	»	19	»
Դավթի	64	»	62	»	2	»
Փոքր Մհերի	36	»	16	»	20	»

Պարզվում է, որ ճյուղերի հաճախականությունը պատումներում ճյուղից-ճյուղ բարձրանում է, բացառությամբ վերջին՝ Փոքր Մհերի ճյուղի: Դավթի ճյուղը առանց բացառության առկա է բոլոր պատումներում: Հաճախականության ակտիվությամբ Դավթի ճյուղին հաջորդում է Մեծ Մհերի ճյուղը, վերջինս՝ Սանասար-Բաղդասարի. ամենափոքր հաճախականությունն ունի Փոքր Մհերի ճյուղը:

Այս երևույթը բնավ պատահական չէ. ճյուղերի դրեթե այս նույն հաճախականությունն է առկա վեպի հրատարակված պատումներում, և մեր արշավախմբի գրառումներն էական դժբերակ համապատասխանում են նախորդներին՝ իրենց մեջ արտացոլելով վեպի այդ իրական-ավանդական հատկանիշները:

Եթե ճյուղերի քանակի և դրանց հաջորդականության իմաստով նոր գրառած պատումները հաստատում են վեպի՝ արդեն եղած ավանդական տեսքը, ապա միևնույն ազգագրական գոտու տարբեր պատումների ճյուղային ընդգրկման պատկերի մեջ նոր դրանցումները որոշակի փոփոխություններ են մտցնում: Այսպես, Շատախի հրատարակված հինգ պատումները Սանասար-Բաղդասարի ճյուղը բնավ չունեն, մեկը ևս՝ ճյուղ է, իսկ մյուս չորսը՝ երկճյուղ (Մհեր-Դավթ): 1971 և 1972 թթ. գրառած Շատախի երեք պատումներն ունեն առաջին՝ Սանասար-Բաղդասար ճյուղը: Ըստ որում, Շատախի Ռաշո Մուրադյանը⁹ 1933-ին պատմել է միայն երկու

ճյուղ՝ Մհեր-Դավթ, իսկ 1972-ին, կրկնակի գրառման ժամանակ, պատմեց չորս ճյուղն էլ: Չմտնելով երևույթի բացատրության մեջ, նշենք, որ այս նոր գրառումները ամբողջապես փոխում են Շատախի պատումների ընդունված պատկերը: Մոկաց նորահայտ պատումները նույնպես ամբողջական են՝ քառաճյուղ: Այստեղ ևս մի փաստ համեմատության և հետադոտության եզր է բացում: Մոկացի Տիգրան Մուրադյանը վեպը սովորել է նախ Քեռուց. նախ Քեռին միայն երկու ճյուղ է պատմել՝ Դավթ-Մհեր: Տիգրան Մուրադյանի պատումը քառաճյուղ է, մի վկայությամբ հանդերձ, որ նախոն ևս չորս ճյուղ է իմացել:

Այժմ տեսնենք մեր գրանցած պատումների որակական հատկանիշները:

Դրառած պատումներն ունեն բանահյուսական տարբեր որակ՝ կախված ասացողի վիպելու ձիրքից, հիշողության աստիճանից, բանավոր սկզբնաղբյուրի որակից, վեպի նկատմամբ ունեցած ավանդական վերաբերմունքի աստիճանից, մասամբ և զրբային աղբյուրների ազդեցությունից:

Պատումների որակը տարբերակելու և արժեքավորելու նպատակով դրանք համախմբել ենք հետևյալ տիպերի տակ.

1. Ավանդական-պատմողական, առձակ և չափածո-երգային հատվածներով տիպ: Այստեղ համախմբվել են այն պատումները, որոնք աչքի են ընկել վիպական բացահայտ ավանդականությամբ, այսինքն՝ վիպական ավանդական ոճով, բանաձևված հակիրճ պատկերավոր խոսքով, վեպին բնորոշ ազատ ոտանավորի տաղաչափական հատկանիշով, չափածո-երգային հատվածների առկայության և հաճախականության բարձր աստիճանով:

2. Ազատ-պատմողական, առձակ և չափածո հատվածներով տիպ: Սրանք այն պատումներն են, որոնք արդեն կորցրել են ավանդական շատ հատկանիշներ (ավանդական ոճ, բանաձևված պատկերավոր խոսք, տաղաչափություն) և վերածվել ազատ պատմի, բայց դեռևս շարունակում են պահպանել ավանդական սյուժետային դիժը, չափածո որոշ հատվածներ, վիպական որոշ դարձվածներ և այլն:

3. Ազատ-պատմողական, առձակով տիպ: Այս տիպն ընդգրկում է այն պատումները, որոնք

⁹ «Սանա ծոեր», հատ. Ա, էջ 755—784. գրառող՝ Կ. Մելիք-Օհանջանյան:

կորցնելով ավանդական-վիպական գծերը, շափածո հատվածներն ու բանաձևերը, դարձել են սովորական արձակ պատումներ:

Ճշ պատումներից առաջին տիպին են պատկանում 39, երկրորդ տիպին՝ 12, իսկ երրորդին՝ 13 պատում: Այսպիսով, գրանցած պատումների մեծամասնությունը (մոտ 61 %) պատկանում է ավանդական-պատմողական տիպին, իսկ 39%-ը, գրեթե հավասար համամասնությամբ՝ ազատ-պատմողական տիպերին:

Անկախ այս որակավորումից, բոլոր պատումների գրառումները, վեպի անդառնալի կործանի դատարարական լայնությամբ պայմաններում, ժողովրդագիտական բացառիկ արժեք են ներկայացնում:

Պահպանելով հանդերձ վեպի ավանդական սյուժեային կառուցվածքը, նոր գրառումները բերում են հավելյալ միջադեպեր, մոտիվներ, հին միջադեպերի նոր հարասումներ: Բացի տարբերակային արժեքից՝ դրանք ակնհայտորեն հարուստացնում են վեպի բովանդակությունը:

Մի նոր պատում, սակայն, բերում է նախորդներից այնպիսի մի տարբերություն, որ փոփոխություն է մտցնում մի ամբողջ ճյուղի՝ Փոքր Մհերի, ավանդական պատկերի մեջ: Մոկաց Տմի գյուղից 1915 թ. գաղթած 82-ամյա անգրագետ վիպասաց Թովմաս Սարգսյանը, վեպի իր պատումն ավարտեց Փոքր Մհերի մասին հետևյալ միջադեպերով.

Մհերը՝ տա շատ հսկա ա ըլնում,

Տավրթից ուժեղ ա ըլնում:

Հրիշտակը կալիս ա. նրան ասում ա.

— Տու ամբողջ տեվերին պրտի կոտորես,

Երկիր պրտի մնա քո ծեռը.

Երկիր պրտի մնա քո ծեռը, Մհե՛ր:

Տա կովում ա տեվերի խետ.

Հավալվա ժամանակ տեվեր շատ են ըլնում.

Սնում ա մե խատ Բագրագ տեվ:

Էտ Բագրագ տեվը շատ հսկա ա ըլնում.

Իրան տունը մե խատ սարի կլոխ ա շինած.

Իրան մեր ա ըլնում:

Էրբմ ա քտա խետը կովում ա,

Էրբմ ա տա խետ կովում ա,

Իրեք կիշեր, իրեք ցերեկ կովում ա:

Ըտա պառավ մերը ըլնում ա.

Իրան տղայի ոտաց տակ փռչի ա քափրմ՝ մոխիր,

Իսկ նա ոտաց տակ սապոնանուր ա լցնում:

Իրեք օր քո քրմում ա,

Բագրագ տեվին կոխում ա կետին, վիզ կտրում ա:

Օր վիզ կտրում ա,

Արդեն ախշաբեր էլ Մհերի տեմ մեցող չի ըլնի,

Շատ հսկա մաղ ա ըլնում:

Էն ժամանակը սատանեն կալիս ա Մհերին

սարմ ա.

— Մհե՛ր,— ասում ա,— տու էդ երգիր ամբողջ ախտիր,

Պայց կարող է ասու խետ էլ մեցես,

Երկինքն էլ մնա քեզի:

Սատանեն խապում ա տառն, էլի՛:

Եվ ու նրան խապում ա, տա միտք վախում ա,

Ըտա ամբողջ ուժը կտրվում ա:

Կտրվում ա, և ասում ա.

— Ես պրտի ասու խետ էլ կովիմ:

Տեսնում ա. ու հրիշտակ իհնում ա տեմ,

Ասում ա.— Արի՛, էս, տու կովինք:

Հրիշտակի խետ կավում.

Հրիշտակ պոնում տնում կետին.

Տնում կետին, մե տեղեն գնչիլով տա ոտ

կապում,

Կախում ա ժառից:

Կախում ա ժառիցը, կարատում ա,

Ու քեզի մահ չըլնի,

Պայց ակռավ քու պլոնիկ ոտի,

Ու կոկն էլ՝ անծեղ, քու քոքեր ոտի.

Քեզի մահ չըլնի՛

Տու ասու խետ մեցառ:

Հենց էնպես կախում ա քալից.

Եվ էդպես էլ մնում ա:

Փոքր Մհերի նման արարքներն ու ճակատագիրը, որ վեպի մինչև այժմ հայտնի պատումներում չկան, շատ կողմերով անմիջականորեն նույնանում են հունական Պրոմեթեոսի և կովկասյան Ամրան-Ամիրանի հայտնի առասպելական զրույցներին և գալիս են վկայելու հայ ավանդական վեպի մեջ զրույցների հիշյալ ցիկլի առկայության մասին: Եթե դա մի կողմից լրիվ փոխում է Փոքր Մհերի վիպական ճյուղի ավանդական պատկերը, ապա մյուս կողմից գալիս է նոր լույս սփռելու վիպական այդ մոտիվների տեղաշարժերի ուղղության, դրանց տեղայնացման և, մանավանդ, կուլտուր-պատմական նշանակության վրա: Եվ ապա, եթե նոր գրառումների մեջ հավելյալ առիթներ կան, որոնք գրեթե նույնքան ընտանի են մեր լավագույն վիպասացներին, որքան «Սասնա ծռերը», ապա հիշյալ ճյուղը, մեզ հայտնի բոլոր գրառումներում գոնե, հանդիպում է առաջին և եզակի անգամ: Եվ, ամենակարևորը, սա այն հատվածների թվին չի պատկանում, որոնք անհարիր են վեպի ոգուն և մտնելով անգամ վեպ, մնում են առկախ, այլ խիստ բնորոշ է և համահնչյուն ժայռին դամ-

ված հերոսների առասպելին, իբրև դրա մեկ այլ տարբերակ:

Բանագիտելի առանձին և ուշագրության արժանի հարց է նաև այն, թե ինչ վերաբերմունք ունեն այսօր վիպասացները իրենց պատմած ժողովրդական վեպի նկատմամբ: Հարցի արժեքը ոչ միայն վեպի ժանրային ըմբռնման պարզաբանման մեջ է, այլ նաև ժողովրդի կենդանի հոգեբանության, նրա ազգային խառնվածքի, նրա կենդանի գնահատականի, որով, վերջին հաշվով, պայմանավորված է վեպի ավանդական գոյատևումը:

Եթե Մանուկ Աբեղյանը դեռ 70 տարի առաջ էր հավաստում, թե ասացողները վեպին վերաբերվում են իբրև իրական պատմության, իբրև ճշմարիտ եղելության, որի մեջ, հետևաբար, ներառված չեն խառնում որևէ ինքնահնար բան, ապա այժմ վերաբերմունքը հիմնականում կենդանի է մնում առայսօր:

Վիպասացներին ուղղած այն հարցին, թե իրենք վեպի տակ ի՞նչ են հասկանում, մեծամասնությունը պատասխանում էր՝ իրական պատմություն, եղած, կատարված բան: Ավելի շրջահայաց մտածողները ճշգրտում էին իրենց հավաստումները, ընդգծելով, թե շատ բան ճիշտ է, որոշ բան էլ ավելացրած է, ճոխացրած: Ավելին, սասունցի ոչ մի ասացող վեպը չէր համարում հերիաթ կամ սուտ, անիրական բան: Ընդհակառակը, նրանցից շատերը, ովքեր լավ էին հիշում Սասնո աղանքը, այն վայրերը, շենքերն ու առարկաները, որոնք կապված են եղել վեպի հերոսների անունների հետ, միաբերան պնդում էին վեպի լիովին պատմական ճշմարտություն լինելը: Սասնո ճախրկանի գյուղացիները կամ վերջիններիս այստեղի սերունդներն ու հարեանները համառորեն ապացուցում էին, թե Սասունցի Դավթի տոհմը շարունակում է գոյատևել մինչև մեր օրերը: Նրանց կարծիքով ճախրկանցի Դավթյանների գերդաստանը, որից և վեպի երբեմնի հայտնի ասացող, այժմ հանդուցյալ Թամո Դավթյանը, սերում է Դավթի տոհմից. նրանց պապենական ջրաղացը ճախրկանում, որի ջրաղացպանն է եղել Թամոն, ըստ համագյուղացիների, պատկանելիս է եղել Սասունցի Դավթին և սերնդից-սերունդ ժառանգարան եղել իր տոհմակիցներին: Հավաստում էին, թե Դավթի ջրաղացքարը եղել է հատուկ քար, որ սկսած Սասունցի Դավթի օրերից երբևէ չի կոտակել և ինքն իրեն «ծլել է» (այսինքն՝ կոտակել) նորայուսնի ժամանակ: Ասացողներից ոմանք Սասնո Երիսու և Սղունդ գյուղերի բնակիչներն էին, որի վրա, ըստ ավանդության, պարզ նկատվում են Քուռկիկ Զալալու սմբակների հետքերը (ասացող Սարգիս Ավագյան, Սասնո Սղունդ

գյուղից. 75 տարեկան): Ավագյանը վկայում է նաև, որ Սասնո գաղտնի տեսել է այն հորը, որի մեջ Մարա Մելիքը գցել էր Դավթին: Մեկ այլ ասացող՝ Խաչատուր Հովհաննիսյանը, 88 տարեկան, Սասնո Սպղանք գյուղից, պատմում է, որ ինքը Մարութա վանքի կողքին տեսել է Մեծ Մհերի գերեզմանը՝ խիստ երկար. սպիտակ մարմարե տապանաքարով և տապանագրով, որը կարգալ չի կարողացել անգրագետ է:

«Սասնա ծռեր» վեպի հերոսների անունների ու արարքների հետքերը որոշ ասացողներ ցույց են տվել նաև Մշո գաղտնի: Մշո էրիշտեր գյուղացի Արտաշ Ղազարյանի ասելով, էրիշտերի կողքին եղել է Դեղձեմեր անունով քրդաբնակ մի գյուղ, որ տեղացիներն ավանդությամբ ծագած են համարել վեպի Դեղձուն և Մհեր անուններից (Դեղձեմեր — Դեղձուն — Մհեր): Մշո Զյուրա Ղարս գյուղից գաղթած 91-ամյա Ենգո Մխիթարյանի վկայությամբ, Մշո Ալվառինջ գյուղի մոտ նա տեսել է քարացած այն շենքերը, որ ըստ վեպի, Դավթի՝ քաշելով գութանը, վարել էր և շուռ տվել: Դրանք կոչվում են «Դավթի շենքեր»: Նույն Ալվառինջից գաղթած Գասպար Ղազարյանի ասելով, Ալվառինջի ետևի սարի առաջ ընկած է մի քար: Ասում են, երբ Դավթի հովիվ է եղել, այդ քարը սարից գլորվել է ցած. Դավթի ձեռքը և ծունկը դիմար է պահել գլորվող քարին. «չոր խփվել է, գացի քարի մեջ, մատներ լն ծակեր է քար: Հարի մկա էդ քար կա՝ Դավթի շորի ու մատներու տեղ լն վրեն: Նա իմ աչքը իմ տեսի»: Ավելին, Սասնո հերոսների հետքերը ցույց են տվել նաև Հալաստանի սահմաններից դուրս՝ Հալեպում և Դիարբեքի-րում: Վիպասացներից ոմանք բանիցս վկայում էին, որ իրենք կամ իրենց համագյուղացիները այդ քաղաքներում տեսել են Դավթի շինած չորս զարգահով բերդերը. «Հանգր, գորգ լը չազղեն գախուղ՝ կամ Դավթի պատկերը ձուռ վրա՝ բանդակած բերդի կենտրոնական մուտքի ճակատին՝ կամ՝ Հալեպի կամուրջի մուտ կա մի վիթխարի վեմ քար, որ ասացողների վկայությամբ՝ Դավթի պարսատիկի քարն է եղել: Այլևս չենք խոսում Սասնո բերդի, Բաթմանա կամուրջի, Մեղրագետի, Մարութա սարի, Մարութա վանքի և բազմաթիվ այլ բնական ու կոշտորական տեղավայրերի մասին, որոնք հայտնի ու հարաշատ են եղել Սասնո և Մշո նախկին բնակիչներին՝ կապված վեպի հերոսների անունների ու արարքների հետ:

Բանագիտական առանձնահատուկ արժեք ունի Մոկսի Ծափանց գյուղից 96-ամյա վիպասաց Մարտիրոս Մուրադյանի պատմած ավանդական զրույցների շարքը, որը մինչև այժմ հայտնի գրառումներում հանդիպում է առաջին անգամ: Այդ զրույցները մի կողմից խորհրդանշական են

ու համահնչյուն վեպի հայրենաշինական գաղափարաբանությանը և վեպի ու վիպական հերոսների նկատմամբ ժողովրդի ունեցած ճշմարտացի պատմական հայացքին: Մյուս կողմից, դժբանք ապացույց են վեպի ժանրային այն հատկանիշի, թե ինչպես հարակից նորանոր գրույցներ պտտվում են վեպի շուրջը և եթե չեն էլ մտնում վեպի ավանդական կառուցվածքի մեջ, ապա կաշվում են վիպական կերպարների հետ, իրենց հետ բերելով կերպարի ու գաղափարի նոր լուսարանություններ: Ահա մի քանի նմուշ.

«Կը մնա շուր ժամանակին, մեկ Սասընա կէրա Բաղդադ տուն կը շինի: Սասընա մե վարպետ կասի.

— Սասընա մարդ ի՞նչ իրավունք ունի՝ էրբա ուրիշ տեղ տուն շինի. ես տ'էրբամ նրա տուն փանդիմ:

— Ա՛յ մարդ, ո՞նց տ'էրբաս, փանդիս: Կասի.— Էս շափուշով, էն էլ՝ մինչև խիմ պտի փանդիմ:

Կէրա գյո Բաղդադ, խաղցրեխով կէրա էդ մարդու տուն կը տեսնա: Կը պըռնի խըմեն կը փանդի: Կը կյան կասին.

— Ի՞նչ իրավունք ունիս, մեր տուն փանդիս: Էտի կասի.

— Ես իրավունք ունիմ մինչև խիմն էլ փանդիմ: Սասընա մարդ ի՞նչ իրավունք ունի՝ էրբա, հուրուշ տեղ պնագվի:

Կը փանդի. կը րողնի կը կյա: Կէրան առաջ.

— Ուստա՛, էն տուն փանդիր, տյու կասիր՝ մինչև խիմն էլ փանդիմ,— կասին,— ուստա՛, ախր Էն խող մնացիր ի փյու շափուշի վրեն: Տո՛ւր. տանինք լվանք, Էն խողեն շլցվի Սասուն: Էդ շափուշ կը տանին կը լվան, կտան ինի, կը խաղցրեն. քե.

— Տյու էն տուն լրիվ փանդի՞ր:

Կասի.

— Խիմն էլ փանդիմ: Սասընա մարդ իրավունք չունի՝ էրբա ուրիշ տեղ տուն շինի:

Մե հուղավերդի կըլի: Կէրան ընու խեր ու մեր կըլին Բրտու ծառա, Բրտու տուն կը ծառային: Մեր կը մնա ոտ ծանդը, կէրա ոշխար կը կրի, հենց ճամպխու մեջ կին կազատվի: Անուն կը տնեն հուղավերդի:

Էդ հուղավերդին կը մնա, կը մեծանա, կասի.

— Ես լսիր իմ՝ փայած Բաղդադ Սասընա մարդու տուն փանդած ին, տը կյան մեր տուն էլ փանդին: Ես էլ տ'էրբամ մեր Սասուն, էլ չըմ մնա Լստեղ:

Երբա: Կէրա Սասուն. կը պատաշի խովրվներուն: Կը պատաշի խովրվներուն, կը խաղցրեն.

— Տու ո՞վ իս:

Կասի.

— Ես հուղավերդին իմ. էսինչ տեղ կապրի, լսիր իմ՝ վարպետ կնացիր ի, հուրիշ մարդու տուն փանդիր ի, ես էլ րողիր իմ իցիր իմ. չգար իմ տուն էլ փանդեր:

— Կյո՛,— կասի,— ոխշարը մուրթե՛ք, պատրաստոքյուն տիսե՛ք, հուղավերդուն ըսօր կոնաղ Լենկ:

Կը պոնին հուղավերդու խամար ոխշար կը մուրին, խորաված կը շինին: Էն հուղավերդին՝ կը խաղցնի, կասի.

— Էտ ի՞նչ ի. էկա ինա ճրու պերան, էն ծովու պերան էկանք, էնտի ոշխար կեր. ոմ օր փախան կնացին, ոմ օր՝ չփախան:

— Վա՛յ,— ասաց,— էն չփախնողնի, էնի Տավրի մատաղներն ին, ինչ կէրան սար, ժողովուրդ ինչ կէրեր սար, սարից տառնալուն, մի ոխշար կէնեն որպես մատաղ Տավրին. կենա, ճամպխորտիր էրբան-կյան, էտ կրին, ուտին: Էսունք նըմեն Տավրի մատաղներն ին մինչև մկա: Էրբանք ճաղաց, ճաղացպան շատ սալըխ կտա. ընի Տավրի ժամանակ սաղ ըլիր ի: Կէրան ճաղաց, ճաղըցպանին կասին.

— Տու շուտո՞ւց եք ճաղցիք շինի:

— Է՛,— կասի,— էս ճաղցը րողիր չեմ ավլիր, Տավրի խարսնըսը րողիր ինչ նստիր ը վըր նը ճաղցը պատիրուն, չեմ ավլիր, տա նշանակ րողիր իմ: Յրս ըն ժամանակ ճաղացպան եք, Տավրը խարսնըսը աղուն աղցիր իմ. էնու րողիր՝ գյո վըր նա պատիրուն, չըմ ավլիր իմ: Հըլը քե չեք հավատում՝ ես նա տյուտ կայներ ը, էս երկու ծառիր կը տեսնե՞ք:

Կասի.— Խա՛:

Կասի.

— Անձեղ իրիք, էնտեղ պոպոք խորից, ճալից ամպիրուն, ամպիր նշանակ էրավ, էրող կնաց: Ժամանազ մնաց, իրիք, ուր պոպոք խաներ, ամպիր քացեր են: Էլ ինչֆան ամպիրուն նայի՝ ամպիր քացեր են: Տեղ չիմացավ, էն պոպոք մնաց Լնդե, կանաչավ: Էն ժամանակվից հընչու նը ճաղցին իմ. էդ պոպոքը ծառիր կը տեսնա՞ս, մե ճասակի էսպիս էղիր:

— Րը՛,— կասի,— է՛ն շենքեք ըրքեր կախին, ի՞նչ են, ըն նշան՝ ըն մագ, ի՞նչ մագ ի: Կասի.

— Ըն Դեղձածամի մագիրն ի. օր ըսավ՝ Տավիր վնասվիր ի. էտ Լնտեղեն գինք էրալ: Թալիոն՝ ծամիր ակըոքեր էր անդեն: Հըլա նիմա էլ րողած անդեն որպես նշանակ: Տավրի նշանակտիր շատ կա: Ձըն Տավիր որպես սուրբ հիշյալի էր: Էս մատաղներ, ինչ մկա կը րողնին նը սարիր՝ նըմեն Տավրի մատաղներն ին:

Ըտու խամար կը պատմին: Էդ հուղավեր-

դին շատ հետաքրքիր կըլնի, նաղացպան էնու իսամար կը պատմի:

Այդ բոլորը դալիս են հաստատելու վիպասացների (և ոչ միայն վիպասացների) այն խոր հավատն ու համոզմունքը, որ «Սասնա ծռեր» վեպը իրենց նախնիների ճշմարիտ ու իրական պատմությունն է՝ գեղարվեստական որոշ հավելումներով ու չափազանցություններով: Ու քանի որ վեպին ասացողները մոտենում էին իբրև իրենց նախնիների անփոխարինելի ճշմարիտ պատմության, հետևաբար, շատերը մեղք էին համարում ստելը, հորինելը կամ ավելացնելը: Եվ եթե միջադեպերից տեղ-տեղ չէին հիշում, իսկույն ավելացնում էին. «Իմա՛լ էլեկցում, էլ չըմ դինա, սուտ չըմ կըրնա ըսի» կամ. «Իմ գիցածն, ախպեր, էդ է, ինչ օր լսեր իմ, ես էնի կըսիմ, ես չըմ կըրնա էլեկցու»:

Վեպի նկատմամբ ունեցած այս ավանդապահ վերաբերմունքն է, ահա, վիպասացների հիշողության մեջ պահել ու պահպանել վեպն իբրև ավանդական մասունք: Եվ որքան էլ, վիպասացների համոզմամբ, իրենք պատմում են անաղարտ ու անխառն ըստ լսածի, բայց ճշմարտությունն այն է, որ վեպը սերնդից-սերունդ, դարից-դար ավանդվելով, յուրաքանչյուր ասացողից աննկատ, յուրաքանչյուր ասացողի կողմից ակամա ենթարկվել է փոփոխությունների, թեպետ ոչ արմատական, այնուամենայնիվ փոփոխվել է, իսկ վերջին հիսնամյակում այլևս չպատմվելով, մոռացվելով՝ քայքայվել ու եթե չի կորել բնավ, ապա միմիայն շնորհիվ արևմտահայ գաղթական սերնդի ավանդապահ հիշողության և իր երկրի ու պատմության նկատմամբ ունեցած գորովալից ու կարոտալից սիրո:

Խզակացուրյուն.

1. «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը ավելի քան քառասուն տարի դուրս էր մնացել բանահավաք-բանադեպերի ու շաղկապներից, համարվում էր մոռացված ու անհետացած: Այդ կարծիքի առաջին հերքումը տվեցին բանասիրության դոկտոր Գր. Գրիգորյանը՝ 1969 թ. «Գարուն» ամսագրում մոկացի Կակո բիձայից իր գրառած պատումի հրատարակությամբ. և նույն ժամանակներում մեր արշավախումբը՝ Ախուրյանից և Արթիկից վեպի երկու նոր պատումների գրանցումներով: Մեր արշավախմբի 1971—1972 թթ. զբոսնած 64 նոր պատումները ապացուցում են, որ թեպետ վեպն, իսկապես, իր բանավոր գոյության վերջին փուլն է ապրում, այդուհանդերձ շարունակում է պահպանվել տարեց սերունդների հիշողության մեջ:

2. Հայ բանագիտությանը մինչև այժմ հայտնի էր վեպի բուն հայրենիքից՝ Սասունից, ընդամենը երկու պատում, գրանցված 1930-ական թթ. Կարապետ Մելիք-Օհանջանյանի կողմից:

Իր գրառած Սասնո 21 պատումներով արշավախումբը ցույց տվեց, որ վեպը ոչ միայն ընտանի է ու հարազատ սասունցիներին, այլև լրացուցիչ տվյալներով պարզեց, որ Սասունում եղել են շատ վարպետ վիպասացներ, որոնցից մի քանիսը 1916 թ. գաղթել եկել են Արևելյան Հայաստան և ապրել մինչև վերջին տասնամյակները: 1920-ական թթ. նրանցից կատարվել են վեպի գրանցումներ, որոնք, ցավոք, առայսօր անհայտ են: Ուրեմն, փոխվում են Սասունի և սասունցիների վիպաստեղծման ու վիպասականման մասին եղած նախկին պատկերացումները, և Սասունն ու սասունցիները վերագտնում են իրենց իսկական տեղը մեր վեպի կերտման ու ավանդման գործում:

3. Նորահայտ պատումներով ու վկայություններով զգալապես փոխվում են նաև վեպի տարածման ազգագրական սահմանները. ընդլայնվում է վեպի աշխարհագրական քարտեզը: Եթե առայսօր վիպագիտությանը հայտնի չէին պատումներ վեպի հայրենիքին մերձակից այնպիսի գավառներից, որպիսիք էին Բուլանըխը, Մանազկերտը, Խնուսն ու Բիթլիսը, ապա այժմ մեր արշավախումբը ձեռքի տակ ունի հիշյալ գավառների նախկին բնակիչներից գրանցած վեպի 9 պատում՝ 3-ը Բուլանըխից, 2-ը Մանազկերտից, 2-ը Խնուսից, 2-ը Բիթլիսից: Վեպը պատմվելու մասին վկայությունները և հետքերը տանում են Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գյուղեր, որոնք մինչ այժմ վեպի տարածման քարտեզի մեջ չեն եղել:

4. Վիպագիտությանը հայտնի էր վեպի միայն չորս կին ասացող (Մարգարիտ Սարգսյան, Մանուշակ Զադոյան, Սպարկերտցի Փառիկ, Զարդար Տեր-Մխիթարյան): Մեր արշավախումբի գրառումներում կա կին վիպասացներից 8 պատում, որից 5-ը ունի գեղարվեստական ու վիպա-ավանդական բացառիկ արժեք: Հարկ է նշել, որ Դավթի մանկության շրջանի հետ կապված գողտրիկ վիպական ավանդություններ ու միջադեպեր են պահպանել միայն կին վիպասացների պատումները, միջադեպեր, որոնցից մի քանիսը բոլորովին նորություն են մինչև այժմ հայտնի պատումների համեմատությամբ:

5. 64 պատումներից զատ արշավախումբը գրանցեց վեպի հետ առնչվող բազմաթիվ նոր կարևոր տվյալներ, ավանդություններ, զրույցներ, վկայություններ, որոնք ունեն բանագիտական-ազգագրական արժեք և գալիս են նոր կողմերից ճշգրտելու, համալրելու, հարստացնելու վեպի մասին մեր ունեցած պատկերացումները:

Բանասիր. գիտ. դոկտոր Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ